

Կարճադրյուր համայնքում հիմնվել է չիչխանի վերամշակման արտադրամաս

26.09.2017

Սեպտեմբերի 26-ին Գեղարքունիքի մարզի Կարճադրյուր համայնքում տեղի է ունեցել «Արևահատիկ» ապրանքանիշի ներքո հանդես եկող չիչխանի վերամշակմամբ զբաղվող խմբի արտադրամասի բացման արարողությունը, որին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը և «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպության Գեղարքունիքի մարզային գարգացման ղեկավար Վարազդատ Մարգսյանը:

«Չիչխանի հավաքչությամբ և վերամշակմամբ զբաղվող խումբը» ձևավորվել է 2015 թվականի հոկտեմբերին՝ «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, վերամշակման արտադրամասը հիմնվել է նաև Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն, «Կանաչ արահետ» ՀԿ ի և անհատ բարերի տրամադրած հիմնական և շրջանառու միջոցների հաշվին: Խումբը, որը բաղկացած է 7 ընտանիքներից 11 անդամներով, ընդգրկված է պտղի հավաքման և վերամշակման աշխատանքներին:

Ներկա պահին խումբն արտադրում է չիչխանի խյուս (մածուկ) ապակե տարայով 400 գրամ գտաքաշով և հյութ՝ 1 լիտր տարողությամբ: Արտադրամասը հագեցած է անհրաժեշտը սարքավորումներով, ինչը հնարավորություն է տալիս արտադրությունը կազմակերպել հիմնականում ավտոմատացված եղանակով: Մինչև «Չիչխանի հավաքչությամբ և վերամշակմամբ զբաղվող խմբի» ձևավորումը՝ անդամները չիչխանը հիմնականում վաճառել են միջնորդներին, ովքեր և հանձնել են դա վերամշակող կազմակերպություններին կամ վաճառել են անհատ սպառողներին՝ հատիկ, աղացած կամ մածուկի տարբերակով:

Բացման արարողությանը մասնակցող Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը նախ շնորհավորել է ներկաներին նման արտադրամաս ունենալու կապացությամբ և շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր նպաստել են դրա ստեղծմանը: Մարզպետը կարևորել է մարզում նման արտադրամասերի ստեղծումը, ինչը, ըստ մարզպետի, կնպաստի մարզում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: